



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ ԺԲ. — ԵՐԶԱՆ ԻԱ. 1889

ՏԱՐԻ ԻԲ. ԴԵԿՏԵՄ. 31

ԿՐՕՆԱԿԱՆ

ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ՎԱՅԵԼԵԼԸ.

Ամեն ժամանակ ուրախ եղէք (Ը. Թեոաղոս. Ե. 16).

Աստուած մեզ չի ստեղծել տխրութիւն, ցաւ ու վիշտ քաշելու համար. մեր բնական աշխարհն արտասուքի հովիտ չէ. աշխարհիս վրայ ուրախութիւն վայելելու նշանն և օրինակը տեսնում եմ՝ ծաղիկների ունեցած գեղեցիկ հագուստի վրայ, որով զօրդարուած՝ վայելում են գարնան պայծառ օրերում:




Աշխարհիս վրայ մեր ուրախութիւն տեսնելու նշանն և օրինակը պարզ հասկանում եմ, լսելով արարածների ուրախութեան ձայներն, որ սրտագրաւ կերպով գալիս են տկանջիս ամեն կողմից. գիշերն էլ, երբ որ հազարաւոր աստղերը պրսպրդում են, ուրախութիւնով լցւած սիրտս բարձրանում է դէպի երկինք:

Ուրախութիւնը սրտիս մէջ շատ խորն է գրել ու տպւորել Ստեղծողս՝ մի սուրբ լուսի նման: Նա, որ ամեն բան, ինչ որ ստեղծել է, և հենց ամեն իւր արարածներին էլ ուրախութեան լի և զեղուն բաժակն է պարգևում իմելու, իւր զաւակներին էլ չի՝ մոռանալ:

Միայն երբոր մարդս՝ իւր չար ժամիրում մոռանում է բարի բանին հաւատարիմ՝ մնալու և բարին սիրելու իւր բարոյական պարտքն՝ իբրեւ բնաւոր արարած, տխրութեան քող է գալիս ու պատում այն բանի վրայ, ինչ որ միշտ լուսաւոր, միշտ պայծառ, միշտ ուրախ պիտի լինէր. մարդուս սիրտն եմ ասում, որ տխրութիւնը գալիս է ու պատում: Այն ժամանակ միջատում է մարդս, սիրտը կտրիւմ, ահ ընկնում, հոգս անժւում, շուարած մնում, այնպիսի դառն ու անտանելի վիճակի մէջ իրան տեսնում, որ կարծես թէ՝ Աստուած է իւր գլխին այդ սև օրը բերել:

Բո գլխիդ եկածի վրայ գանգատ մի անիլ, ինքդ քեզ վրայ ու քեզանից գանգատուիր:



Երբոր ամեն բան, ինչ որ կայ աշխարհիս վրայ, զարթնում է՝ ուրախանալու համար, կարո՞ղ եմ ես իմ սիրտս փակել այդ գեղեցիկ զգայմունքին և անմասն մնալ:—Արտասուք թափելու օրերս ունեցիլ եմ. ուրախութեան օրեր անց կացնելուց ե՞տ պիտի կենայի, հրաժարուէի: Ես ստեղծուած չեմ՝ ո՞չ մըշտական տխրութիւն քաշելու, ոչ էլ շարունակ ուրախութիւն տեսնելու համար: Փոխուող ժամերը բերում են լոյս ու ստուերի, պայծառ արեւ ու պարզ երկինք, օդի խառնակութիւն ու մըրիկ, տխրութիւն ու հընուանք: Բայց Աստուած է

այս ժամերն ուղարկողը. նա այս փոփոխութիւններովն, որ լինում են, ուղղում է ինձ դաստիարակել, աղնուացնել:

Այն, ես էլ ուրախութիւն տեսնելու համար եմ ծնուած: Աստուած, որ կատարեալ սէր է, նա է ստեղծել այս աշխարհս. սորա համար աշխարհս չի կարող տրամութեան, ցաւերի ու թշուառութեան տուն լինել: Աստուած, որ լիակատար սէր է, մեր բարեքնանկութիւնն է կամենում. ինչպէս պէտք է ինքնիրոյ միջ վատ ասենք, որ վայելում ենք նորա հայրական սիրովն ու խնամքով իւր զուակների համար պատրաստած լաւ օրերն:

Այս պատճառով սխալվում են նրանք, որ ուղղում են միշտ լուրջ, միշտ սառն լինինք, և ուրախ սրտի տէր մարդոց զուարթութիւնը պախարակում են: Նրանց մթնածութիւնն ու սառնասրտութիւնն աշխարհիս մէջը դրուած բնական կարգին հակառակ է: Նրանց վատ տրամադրութեան մէջ եղած ու չբացուող սիրտը կուգենար, որ բոլոր աշխարհս էլ իրանց պէս ախուր դրութեան մէջ տեսնէր, որ մենակ չմնային: Բայց Աստուած սիրոյ՝ ոչ թէ աստելութեան Աստուած է. երջանկութեան՝ ոչ թէ թշուառութեան:

Միշտ ուրախ եղէք, յորդորում է Քրիստոս առաքեալներից մէկն: Ուրախ սիրան ու զուարթ միտքը՝ մարդուս մարմնով ու հոգւով առողջ լինելու հաստատ նշանն է: Իւր խղճմտանքի անդարձութիւնից ուրախ սիրտ ունեցող մարդն՝ ամենեւին չի ուղղում ուրիշներին տրտում տեսնել: Եթէ որ ձեռքիցը գար, իւր սրտի ուրախութիւնից բոլոր աշխարհին էլ բաժին կտար, ամէն լաց եղողների արտասուքը կսրբեր: Չարագործ անպիտան մարդին էլ կարող է լաւ պրահաբանութեան մէջ կենել որով, բայց իսկապէս ուրախ լինել չի կարող: Մոլի մարդն, իրան յաջողած մի չարամիտ խաղի վրայ կարող է ուրախանալ, որ կարողացաւ խաղալ, բայց շատ չի անց կենում իւր զգացած ուրախութեան վրայ, ու իւր կեցոտոտ խղճմտանքի խայթը, հանգստութիւն չտուող մտածմունքն ու հոգսերը գալիս են իւր ճակատն էլի կնճռոտում: Նրա ուրախութիւնը՝ պարզ, մաքուր երկնքի նման չէ, այլ սև սև ամպերի միջից փայլատակելուն ու յանկարծ մի

բոլոր էլ լոյս երևելուն: Իսկական ուրախութիւնը զւարթ տրտի՝
 աշխարհ-իշխան ընկերն է միայն: Սերա՝ համար երեխայական ու
 պատանեկական հասակի մէջ եղողներին տեսնում ենք գրեթէ
 միշտ ուրախ, ինչու որ նրանց միտքն նախապաշարուած, աղմկ-
 ուած չէ, նրանց սիրտն անյրգով, ազատ, պարզ և անենդ է:
 Բայց իրանց լաւ տրամադրութիւնը կորչւում է, հենց որ կրքերն
 արթնանում են՝ և հոգսերը մեծանում: Այն Ժամանակ որ
 էլէ՛ խօսքն արգեօք ուրիշ կերպ պէտք է հասկանանք, որպէս
 թէ առաքելը յորդորում ու խրատում լինէր մեզ, որ ամեն
 Ժամանակ առաքինի լինինք, միշտ մաքուր լինինք մտքով ու
 գործով, միշտ պարզ ու անխարգախ սրտով ունենանք մեր ըն-
 թացքը մեր երկնստւոր Հօր առաջ:

Ինչի՞ համար է մեր բոլոր ջանքն ու ճիգն՝ և ի՞նչ բանի ենք
 ձգտում: Որ բարեւջանիկ լինինք: Ինչու՞ համար ենք տանում
 օրուան ծանրութիւնն ու տաքութիւն: Որ աւելի անարգել
 կերպով վայելենք հանգստութեան քաղցրութիւնն: Ինչի՞ հա-
 մար են մեր ամէն հոգացողութիւնն ու աշխատութիւնն: Որ
 օրհնութիւն վայելենք:

Ինչպէս որ մարդս միշտ, զուարթ ու հանդարտ սրտով եղած
 Ժամանակը, բարի բան անելու շատ ընդունակ է և յօժարա-
 միտ, այնպէս էլ ուրախացնող զւարճութիւններն, ընդհան-
 րապէս, այսպէս ասեմ, դեղ են՝ ինչպէս, մարմնի, այնպէս էլ
 հոգւոյ համար: Ինչպէս որ սրտի նեղութիւնն ու տխրութիւնը
 մարմնի առողջութիւնը թուլացնում է, այսպէս էլ ուրախու-
 թիւնը մեր մարմինը զօրացնում է: Հիւանդներ են եղել, որոնց
 անկողնի մօտ բժիշկները հաւաքուած իրանց բոլոր հմուտ-
 թիւնը գործ են դրել՝ և ոչ մի օգնութիւն անել չկարողանա-
 լով, յուսահատուել են, բայց մի փոքրիկ ուրախութիւն փրկել
 է հիւանդներին, դեղ է դարձել ու բժշկել: Մեր հոգին հոգ-
 սերի ծանրութիւնից վերջապէս իւր ուժից բոլորովին կրնկ-
 նէր, կրնկճուէր, եթէ որ ախորժելի և ուրախացնող զուար-
 ճութիւններով չկազդուէր, չզօրանար: Միտն ուրախ մար-
 դը՝ ամեն գործ կատարելու համար աւելի հակամիտ է և
 պատրաստ:

Բայց, ինչպէս որ իսկ քրիստոնեայ մարդու անմիջով սիրտը կեանքի փոթորիկներէ մէջ երբէք չի պրտորւում, չի շփոթւում, այնպէս էլ իւր ուրախ ժամերում՝ իւր խոհեմութիւնն իրան չի պիտի թողնի: Ճշմարիտն հմտութեամբ որ, շատ մարդու համար աւելի հեշտ է, անբաղդութեան ու փորձանքի մէջ բնկած ժամանակն, ինքն իրան չկորցնելը, քան թէ՛ ուրախութեան առիթներ եղած միջոցին, չափ ու սահմանից դուրս չբաշխէ: Կնշու որ, մեզ մի ձախորդութիւն, մի փորձանք, մի փտանգ պատահած ժամանակ, մեր խելքը մեր գլուխն հնք հաւարում և ամենայն կերպով աշխատում ենք, ամենայն խոհեմութիւն բանեցնում, որ մեզանից հեռացնենք. բայց, ուրախութեան միջոցին, սրտանց անձնատուր ենք լինում նրա մեծ ազդեցութեանն, որ անում է մեզ վրայ, և՛ առանց մտածելու կամ զգուշանալու՝ բոլորովին ինքներս մեզ տալիս զուարճութեան հոսանքին՝ ու տարւում:—Ուրեմն քրիստոնէի իմաստութիւնն աւելի ևս վսեմ կերպով պիտի հրեւի իւր ուրախութիւնն վայելիլու միջոցին, քան նեղութեան դէմ կռուելու ժամանակ:

Հասարակ ու պարզ մարդուն՝ ուրախութեան կամ զուարճութեան ազդեցութիւնն իւր խելքիցը հանում է. իսկ լաւագոյն անձի՝ կամ իւր գլխի տէր քրիստոնէի ուրախութիւնն իւր ձեռքն է: Հասարակ, պարզ մտքի ու սրտի տէր մարդը, շատ ուրախութեան մէջ եղած միջոցին, տարւում է ու իւր խաղիցը դուրս գալի. բայց իսկական քրիստոնեան, գեղեցիկ ժամեր անցկացնելով, բարձրանում է հոգւովն ու սրտով և ազնուանում: Աշխարհատէր մարդոց զգայական զուարճութիւնների ետեւից ընկնելու հետեանքն այն է լինում, որ օգիւց ընկնում են, թուլանում, վրաները ձանձրութիւն է գալի, զզւում են, շատ անգամ էլ փռհիմանում են իրանց արածի վրայ. իսկական քրիստոնեան՝ իւր վայելած մեծ ուրախութիւնը միտքը բերելովն է ուրախանում. ամեն մի լաւ օր անցկացնելուցն յետոյ՝ նրա սիրտը փառաւորւում է այդ գեղեցիկ օրուայ գեղեցիկ երեկոյեան արշալուսից:

Քրիստոնէան սիրում է ուրախանել անելու, բայց այն ուրախանելու-

Նէրը Բայն, որ Աստուծոյ օրհնումը չէ: Նա ամեն ուրախութիւններն էլ վայելելն իրան թողատրելի է համարում, բայց ոչ այն ուրախութիւններն, որ վայելելն՝ կամ ուրիշներին, կամ իրան վնաս կրերէր, կամ իւր սրտի արժանաւորութեան համար՝ պակասութիւն:

Ա՛խ ինչպէս մեծ և անսահման է լուսի թագաւորութիւնն, որ Աստուծոյ յայտնի արաւ մեզ, երբոր իւր անփրջանայի բաւականագործութեան դռները բացեց մեզ երբ որ մեր հոգիներին սասց թէ՛ կեանք ունեցէք, երբ որ տարուայ եղանակների տեսակ փոփոխութիւններն իրանց բացուած ծաղիկներովն, բերած պտուղներովն ու ձմեռուայ թունդ քամիներովը մեր աչքի առջն անց կացան, երբոր մարդոց ցեղերն ընտանեւոր մեզ իրանց գիրկն ընդ ունեցին, երբոր մեծացող սերնդի տուած յոյսը մեր կեանքի ընկերը դարձաւ, երբոր սիրտ բարեկամներն իրանց բարեբաղդ ժամերումը մեզ իրանց սրտին սեղմեցին, երբոր մեր աշխատութիւնն ու կատարած գործը մեզ և ուրիշների համար օրհնաբեր արդիւնք ունեցաւ, երբոր առաքինութիւնը մեզ պարգեւեց իւր խաղաղիկ հրճուանքն, երբոր Աստուծոյ մեր գլխին եկածներէց ստացած մեր վերքերի մէջ յայտնուեց, երբոր երկնային լուսաւորների ճառագայթները յաւիտեանական ուրախութիւնների նախազգացումով մեր սիրտը լցրին:

Մարդու մտքի մի յանցաւոր սխալանքն ու մտորութիւնն է, որ նա, Աստուծոյ մեզ համար պատրաստած լիառատ և անսպառ ուրախութիւնները թողած, ուղեկցայ այնպիսի բաների մէջ իւր զուարճութիւնը գտնել, որոնցով մեզ և ուրիշներին վիշտ, տանջանք ու նախատինք ենք պատճառում: Միտքը միմեան՝ կամ խելագար մի մարդ պիտի լինի, որ սիրի իւր մտերիմ՝ բարեկամների, կամ օտար մարդոց դէմ՝ թուր բանեցնել, որ նորանց սիրտը խրի: Այս բանն, այս, կանի այն չարահոգի մարդն, որ ուրիշներին պատահած վատ բանի վրայ ուրախացող է, այս բանը կանի անամօթ խաբեբան, այս բանը կանի անմեղին, անփորձին գլխից հանող անառակը՝ կամ պատիւ սրատաւորող զրպարտիչը: — Կամ թէ խելքը կորցրել չէ՞ մի մարդ, երբոր իւր

որտի ուղածն անելու համար՝ իբրև մի զուարճութիւն՝ թոյն խմիւ— Եւ ի՞նչ է ամբարտաւան մարդի արածն, երբոր՝ ուրիշ- ներից բարձր ու գերազանց լինելու համար՝ իւր տունը քան- դում է, իւր փողը ջրի պէս փչացնում, արած շուայլ ու չափից դուրս ծախքերովն: Ի՞նչ է փոքի գերիի արածն, որ հոգի է տալի լաւ լաւ քաներ ուտել, խմելու համար միայն, և կար- ծում է թէ՛ արքայութեան մէջ է, թանկագին ու համով բա- ներ փորը լցնելով, մինչգեռ իւր այգալիսի չափազանց կեր ու խումբի ետևից ընկնելովն, իւր կեանքն է կործացնում: Ի՞նչ է երեսի ջուրը գնացած՝ ցանկատարի արածն, եթէ ոչ անմոտաբար իւր ամենապատուական ուժիցն իրան քցել, որ ժամանակից առաջ բանգը թռած, սակար կաշի դարձած, դժուարութեամբ ոտերը փոխելով ման գայ, ոչ մեռած, ոչ կենդանի մարդու նը- ման: Ի՞նչ է արեւցողի արածն, նա՞ գլուխ շշմեցնող խմելիք- ներով ամեն օր իւր խելքը՝ թմրեցնում է և, մարդութիւնից դուրս գալով, փայլենի կենդանիների կարգն է մոռնում: Ողոր- մելի՛ մարդիկ են գրանք բախրն էլ, կարծես սիրաներն ուղւում է ու միտքներն էլ այն է, որ իրանց համար բացուած վարդերը պոկեն, թափ/թփեն, ու՛ նրանց տակը մնացած՝ փշիւրիցն՝ իրանց համար պտակ չինեն ու գլուխները գնեն:

Ուրախ-խան աշխարհի անբաժան ընկերն է միայն: Քրիստոնե- տան փախչում է ամեն մի ուրախութիւնից, որի հետեւանքը լինում է փոշիանում թիւն, և յիշաւի, անպատճառ պիտի փոշիմանի մարդս՝ իւր սրտի ուղածն՝ իբրև մի զուարճութիւն իւր համար՝ կատարելուց, որով ուրիշին իւր ունեցած բազդա- տութիւնից զրկեց, կամ իւր սրտի հանգստութիւն և ուրա- խութիւնը կորցրեց:

Ամեն մի ընկերակոյն ուրախութիւն անելու առիթ հղած մի- ջոցին, պէտք է միշտ առաջ ինքներս մեզ հարցնենք թէ՛ տը- դեօք պատիւ կբերի՞ մեզ այդ ուրախութիւնն, որ ուղւում ենք անել, ու մեր արժանաւորութեանը համապատասխան է և վա- յելու: Եթէ տեսնենք, որ այնպէս չէ, այն ժամանակ պէտք է հասկացած լինինք, որ հենց այս գլխից մեր պարտականութիւ- նը հրամայում է մեզ, որ հեռու կենանք, երբոր այդ ուրա-

խոթ թիւնից զբեկուելը շատ թանկ էլ տրժենար մեզ՝ ու մեծ դժուարութիւն էլ քաշէինք ինքներս մեզ յաղթելու, որ հեռու մնանք այսպիսի մի զոհարճութիւնից։ Բայց կարող էլ է պատահել, որ բոտ ինքեան պակասութիւն չբերող մի զոհարճութիւն, որին մասնակից կարող էին լինել ուրիշներն, առանց իրանց մարից մի բան տնց կացնելու, մեզ, կեանքի մէջ մեր ունեցած պիւրքին, կամ շատ լաւ տրամադրութեան մէջ եղած միջոցին, կարող են վնասակար լինել։ Արեւիլ է որ այդ ժամանակ մի չար միտք էլ է ծնում մեր մէջ՝ փորձութեան մէջ ընկնելու, որ ուրիշ ամէն մէկ մարդու մտքից հեռու է։ Այն ժամանակ, ով քրիստոնեայ, միտքդ բեր՝ Պօղոս առաքելոյ զգուշացնող իմաստուն խօսքը թէ՛ ամեն բան կարող է մահել, բայց ամեն բան վայելուչ չէ՝ ամէն բան ձեռքիցս կգայ անելու, բայց ոչ մի բան ինձ գերի պիտի չանի։

Սբ. համար է, որ «բնորոշեան» իրեն վայելուչ աւրաւութիւն է հայն վայելու՜մ։ Մինչև անգամ մեր՝ անմեղ ուրախութիւն արած միջոցին՝ պէտք է մտածենք թէ՛ մեր հաւակին ու սեւին, մեր կացութեան ու կոչմանը անհամապատշաճ չէ՞ արգելօք։ Մեր քրնքուշ զգացմունքը մեզանից պահանջում է, որ մենք զոհարճանալու համար այնպիսի ժամանակ չընտրենք, որ անպատշաճ լինի, կամ այնպիսի պէշ, որ գուցէ ուրիշներին ծուռ մտքի գրնալու և գայթակղուելու պատճառ տայ։ Մենք մեր խելքութիւնովը պէտք է զգոյշ կենանք, և սխալմամբ այնպիսի մի բան չանենք, որ ուրիշներին սխալեցնենք մեր արժանաւորութեանը վրայ, և մեր վրայ նրանց ունեցած կարծիքը փխկիւն պատճառ չտանք, ու որտեղ համար պէտք է շատ զգոյշ լինինք մարդոց ընկերութիւն ընտրելումն, որ չգանուինք այնպիսի մարդոց մէջ ու նրանց հետ նիստ ու կաց չանենք, որոնց մեղ հետ ունեցած յարաբերութիւնը մեզ պատիւ չէր բերիլ։

Այս բանի մէջ սխալում են երբեմն ամենալաւ մարդիկն էլ, որ կարծում են թէ՛ երբ որ մի անալոյցի, կամ անիրաւ բան չեն բռնում, ամենեւին հարկաւոր էլ չէ ուշ դնել այն բանին, որ պատշաճ է թուում։ Բայց այսպիսի մարդիկն իրանց արած փորձերովը յետոյ շատ անգամ հակակայք են թէ՛ որչափ թանկ

է նստել իրանց զրոյց իրանց չարահալը մեծ արժէք ունեցող այն կենցաղական օրէնքն, որ ասուած է թէ՛ մարդս նոյնչափ պարտական է զգուշանալ իւր քրտնէն, որքան որ ինչպէս իւր քրտնէն լայն է, ինչպէս որ պարտական է զգուշանալու, որ կեղծաւոր չճանաչուի:

Երբ որ տարիքն առած մարդիկն երիտասարդներէ արած ուրախութիւններին են հետեւում, նրանց հաւանութեւնը, զարգարութեւնը սէր ունենալուն, մինչև անգամ նրանց մտքրիկ տնտեսի մութիւններն են անում: — Կամ երբ որ մայրերն, աղջկերքն իրանց սեւի քնքուշ զգացմունքն այն սիրելի պարկեշտութիւն են մտածում, որ լաւ մարդոց յարգել է տալիս իրանց, երբ որ սիրում են այնպիսի զուարճութիւններ, որ տեղամարդիկը միայն կտրող էին անել իրանց պատիւն են արտատաւորում ու պակասեցնում: Երբ որ այն մարդիկն, որ իրանց ունեցած պաշտօնովն ու զիրքով՝ սերիշներից պատիւ են պահանջում, և իրանք սոոր կատակներ անելուց ամենևին չեն քաշում, երբ որ ծնողքն այնպիսի յիմար բաներ են անում, որ իրանց երեխերքին իրանց վրայ ծիծաղեցնում են երբ որ մենք զուարճութիւն ենք պոռում, այնպիսի տեղեր, որ տեղերն որ իրանց սովորական բան դարձան տիրող անվայել նիստ ու կացութիւն լաւ անուն չունեն, մենք ինքներս ենք մեր պատիւը ցելի մէջ գցում:

Թոյլատրելի զբօսանքներ կամ զուարճութիւններն անգամ պէտք է չտախտորութեամբ վայելենք, մեզ համար հաճելի կերպով ժամանակ անցկացնելու և այդպէսով մի քիչ հանգստանալու նշանակութիւն պիտի ունենան և ոչ թէ այն տախտանին հասնեն, որ կիրք դառնան: Բայց հենց որ զուարճութեան մի քանի տեսակները մեզ համար անհրաժեշտ կարիք են դառնում, իրանց ունեցած բարի ազգեցութեան ամենագեղեցիկ մասը կտրցնում են: Այդ զուարճութիւնները մեզ համար անհրաժեշտ կարիք են դառնում, որ անպատճառ պիտի կատարուին, և այդ զուարճութիւնները մեզանից կախում ունենալու տեղը, մեզ վրայ տիրող կարիք են դառնում, ու մենք կրցնում ենք մեր մտքի ու արտի հանգստութիւնն, երբ որ զբո-

կուեիտի, կորցնում ենք մեզ համար անհրաժեշտ կարիք դարձած այդ զուարճութիւններն: Մենք դադարում ենք քաղ մարդ լինելուց այլ ևս, և այն ժամից սկսած՝ էլ բաղդաւոր մարդիք չենք լինում: Զուարճութիւնը հոգւոյ և մարմնոյ համար հանգստութիւն, հանգստանալէ աշխատութիւնից յետոյ միայն: Զաւիից անց կենալով, և մշտական կարիք դառնալով մեզ համար այդ թանկագին դեղն, սպանող թոյն է գտնում մեր անխելքութիւնով:

Զուարճութիւնը մեզ պէտք է կազդուրի, մեր ուժը նորոգի՝ մեր կատարելու պարտականութեանը համար: Ամեն օր ուրախութիւններ անելն, ամեն օր զբօսանքների մէջ լինելն, տօներ, խնճողքներ սարքելն՝ փախանակ մեզ կազդուրելու և մեր ոյժը նորոգելու, դառնում են մեր կեանքի գլխաւոր պարտականութիւնն, որոյ վրայ վերջապէս ամեն մի լուրջ, զգացմունք՝ պարտականութիւն կատարելու համար՝ յնչաւորում է:

Ընկերա-լեւան մէջ ուրախ-լեւան անելն միջոցն էլ բարոյական խորհեա-լեւանի կորցնում: Ենքն իրան երբեք չէ մոռնում, և կամաց ետ է քաշւում, երբոր զգում է, որ իւր ուրախութիւնը փայրների զբօսանքի ու զուարճութեան է փոխւում՝ ու կապը կտրած մի դրութեան է հասնում, ուր որ ոչ իւր լեզուն կարող է պահել և ոչ իւր արածների տէրը լինել:

Թէև նա չի փախչում առիթներից սրտանց ուրախ լինելու ու ուրախների հետ, բայց միշտ նրա համար մեծ նշանակութիւն ունին այն ուրախութիւններն, որ պառնց փառաւոր և գլուխ պառնա տուող լինելու, կարող են շատ երկարատև լինել, որ խաղաղիկ ու մաքուր ուրախութիւն են պարգեւում, և անց կենալուց յետոյ էլ՝ երկար ժամանակ մեր մտքից չեն ընկնում՝ իրանց սրտածառած ախորժելի ուրախութիւնովն:

Եւ այդ կարգում պիտի համարիմ՝ ամեն բանից առաջ՝ ընտանեկան կեանքի ուրախութիւններն, օգտակար աշխատութիւնների մեր սրտին բերած զուարճութիւնը, ծածուկ մեր արած լուսութիւնից զգացած մեր ուրախութիւնն, ընդհանրապէս այն երկնային հրճուանքն, որ յառաջ է գալիս ով Յիսուսի կրօն, առաքինութիւնից և ինչ Երջանկացնողից: Սրտի

այն գոհութիւնն, որ ես պատճառեցի ուրիշներին, հենց իմ սիրտս էլ գոհ անկուլ համար էր, այն ուրախութիւնն, որն ունեւալու պատճառ եղայ ուրիշներին, հենց ինձ էլ պարգև եցի։ Այո, մի բուռը սերմն, որ ես ցանեցի իմ կեանքիս ճանապարհի վրայ, տարիներ և օրեր անց կենալուց յետոյ, իբրև մի ամբողջ հունձք իմ բարեբաւակութեան՝ ես էին գառնում՝ գէպի ինձ և վայելում էի։

Ուրեմն ինչո՞ւ երբոր իմ ստեղծող Աստուծո՞ւն բարութիւնն արգէն այս աշխարհումս քանի ու քանի ուրախութիւններ իմ առաջն գրել է, որ վայելիմ, ինչո՞ւ նրանց միջից չընտրէի ամենաազնիւներն ինձ համար, ամենաանպղտորներն և ամենաանպականներն։ — Երբոր կարող եմ որոշել և զանազանել կենդանւոյ և հրեշտակի ունեցած վայելչութիւններն, ինչո՞ւ պիտի չընտրէի և գերազանց չհամարէի աւելի բարձր հոգիների ուրախութիւններն։ Եւ վսեմ՝ արարածների ուրախութիւններն ի՞նչ պիտի լինէին, եթէ ոչ աւելի ազնիւ, աւելի կոտորեալ, աւելի իմաստուն և աւելի աստուածաման լինէին։ Այս այն ուրախութիւնն է, որ Յիսուս զգաց, երբոր տեսաւ իւր խօսքի ազգեցութիւնը մարդկային ազգի բարեբաւակութեան վրայ՝ և ասաց, «ուրախ եղէք, որ ձեր անունները գրուած են երկնքում» (Ղուկ. Ժ. 21), —

Դու, գերագոյն Աէր, որին չեմ իմանում՝ ինչ անուն տամ, Դու ինձ երջանկութեան ես վիճակել — երջանկութեան այս աշխարհիս վրայ, երջանկութեան լուսագոյն աշխարհում։ Երբէք անարման չեմ լինիլ իմ յաւիտենական կոչմանս։ Իմ բուլոր կեանքս, իմ մտածմունքս, իմ գործս՝ շնորհակալութեան պատարագ (ընծայ) լինի այն անվերջ երջանկութեան համար, որին Դու ինձ նուիրել ես։ Դու ուրախութիւն վայելիլու համար ես ստեղծել՝ թէ գեանի վրայ սողացող որդիին թէ պայծառացած մարդոց, որ Քո ամօթից առաջ աղօթք են տնում։

Ո՛վ անսահման Աէր, անմեղի հրճուանքը, թռչող՝ երկինք բարձրացող ծիծեռնակի երգն անսահման երկնքի աշխարհներն, որ պոսոյտ են գալի, փայլելով տիեզերքի մէջ անփոփոխ և մըշտական միաբանութեամբ ու համաձայնութեամբ, Քեզ են փա-

աւարտում: Քնդ հեռանայ, կորչի սրախ տիրութիւնը, թող
հեռանան գլխիցս ու գութս գան սրաիցս հոգսերս: Ամեն մի
օրս մի առաքինի գործով զարգարեմ, որ անփափօխ կերպով ու-
րախ լինիմ ու մնամ: Եւ ուրախութիւն կ'ապշիւեմ, որ այն ու-
րախութեանս մէջ Քեզ փառաւորել կարողանամ: Քեզ, Որոյ ան-
քննելի սէրն օրհնում, են բոլոր արարածներդ և յաւիտենա-
կանութեան հաղարաւոր տարիներն: — Ալեւուիա, Բարձրելոյն,
Յաւիտենականին, ամեն արարածներին ուրախութիւն Պար-
գեւոյին փառք և գոհութիւն յաւիտենան յաւիտենից: (Ալե-
ւուիա):

(Թարգմ.) Գ. Ե. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՐԱՋՆՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ.

(Նարեկ-Նուհ-Բեռն).

Իրազնական գատերի երկրորդ հանգամանքը այն է, որ ճշգիւ
որոշուի գասի Նուհաւը, որ նշանակուած սահմանից դուրս՝
աւելի ոչինչ չը քննուի: Ուսուցիչը պէտք է լաւ դիտէ, թէ
գատին ի՞նչ ուղղութիւն է տուել իւր ղեկով: Առաջ այդպիսի
գատերը հարկաւ անհատ բաներ կը լինին, բայց պէտք է ձգտել,
որ գութս հեռահեռ միութիւն ստանան: Եւ որովհետեւ դոցա
ստանալի ուղղութիւնները շատ զանազան կարող են լինել,
ապա ուրիշ միշտ պէտք է խիստ ընտրութեամբ նշանակուին:
Մեծամեծ զօանգներ առաջ կու գան, եթէ մի գատի մէջ բազ-
մաթիւ հանգամանքներ իրար հետ խառնուին, մինչդեռ եթէ
զգուշանանք նոր տեղեկութիւններ կուտակութիւնից և դա-
սին տանք չափաւորութեան և միութեան գրոշմ, այնու ղերծ
կու մնանք զանազան անպատահելի թիւններից: